

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼԼԻ ԷԴՈՒԱՐԴԻ

**ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ. ԻՆՏԵԳՐԱՅՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ**

Ժ.02.07 – «Ռոմանագերմանական լեզուներ (անգլերեն)»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

բ.գ.դ., պրոֆեսոր
Սեդա Քերոբի Գասպարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բ. գ. դ, պրոֆեսոր
Նարինե Լևոնի Հարությունյան
բ. գ. թ, դոցենտ
Գոհար Ռազմիկի Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝

Ռուս-հայկական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի մայիսի 13-ին ժամը 22 ԲԿԳԿ-ի Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 10-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
բ.գ.դ., պրոֆեսոր՝



Գայանե Մուրադյան

Ավանդաբար փոխաբերությունը բնութագրվում է որպես իմաստի փոխանցում մի բառից մյուսը՝ համանմանության հիման վրա: Սակայն փոխաբերությունը բազմաշերտ երևույթ է, որը պահանջում է համակողմանի ուսումնասիրություն՝ ներառելով նաև դրա հասկացությային բնույթի քննությունը: Այս հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ է ընդլայնել ուսումնասիրության շրջանակը՝ ներգրավելով ոչ միայն լեզվաբանական, այլև փիլիսոփայական, հոգեբանական և ճանաչողական վերլուծության ոլորտները:

Փոխաբերության էությունը սահմանելու հարցում առանձին դիտարկման է արժանի նաև այն գաղափարը, որ փոխաբերությունը՝ որպես ճանաչողական մոդել օժտված է ներգործման մեծ ներուժով, որն արտահայտվում է փոխաբերության որպես հասկացության ոչ միայն սահմանման, այլև հասկացույթների դասակարգման գործընթացը խթանելու կարևորագույն հատկությամբ: Այլ կերպ փոխաբերության ուսումնասիրությունը նպաստում է մարդու մտածողության յուրահատկությունների բացահայտմանը և ստեղծագործ ու պատկերավոր մտածողության ներքին կառուցվածքն ըմբռնելուն:

Ընդունված է, որ մտածողության կառուցվածքի հիմքում ընկած է հասկացությային համակարգ, որը բնութագրվում է ինչպես փոխաբերական, այնպես էլ փոխաբերական երանգավորում ունեցող հասկացույթներով: Առաջին տիպի հասկացույթների ընկալման համար անհրաժեշտ են միջնորդ-հասկացույթներ, մինչդեռ երկրորդների ընկալումն ու հասկացումը տեղի է ունենում ուղղակիորեն: Մյուս կողմից՝ փոխաբերության ընկալման գործընթացը ներառում է ոչ միայն միջնորդ-հասկացույթների գործադրում, այլև մարդու փորձառության դրսևորումներ, ինչպիսիք են ընկալողական և շարժողական համակարգի գործունեությունը, մտավոր և զգացական կարողությունների գործադրումը, ֆիզիկական միջավայրի և այլ անձանց հետ շփումը: Փորձառությամբ ձեռք բերված գիտելիքի կառուցումն ու դասակարգումը նույնպես պայմանավորված են փոխաբերական իմաստի ձևավորման և ընկալման գործընթացով՝ միաժամանակ նպաստելով դրան: Այստեղից կարելի է եզրակացնել, որ փոխաբերությունը փորձառության կանոնակարգման միջոց է:

Փոխաբերության քննությանը առնչվող ուսումնասիրությունների շարքում անվերապահ է հասկացությային փոխաբերության տեսության նշանակությունը, որը, Ջորջ Լակոֆի և Մարկ Ջոնսոնի մշակմամբ շեշտադրեց մարդու հասկացությային համակարգի լիակատար փոխաբերականությունը և փոխաբերության միջոցով մտածողության, ընկալման և արտաքին աշխարհի միջև կապ հաստատելու

¹ Lakoff, G. and Johnson, M. (1980). *Metaphors We Live By*, University of Chicago Press, Chicago.

իրողությունը²: Այսպիսով՝ կարելի է փաստել, որ փոխաբերությունն ունի նաև արտաքին աշխարհը բնութագրելու ներուժ:

Փոխաբերությունների հետազոտության ոլորտում կարևոր դեր ունի դրանց տեքստաբանական բնութագրի համապարփակ քննությունը: Սույն աշխատանքի շրջանակում կատարվել է գեղարվեստական գրականության տեքստերին բնորոշ փոխաբերությունների դիտարկում և վերլուծություն: Գրական տեքստի ուսումնասիրության կենտրոնում իմաստային վերլուծությունն է, որը ենթադրում է բառիմաստից մինչև տեքստի/գրական երկի ընդհանուր իմաստի հետազոտություն: Այս պարագայում կարևորվում է տեքստի իմաստային երեք մակարդակների (տեղեկատվական, խորհրդանշային և թաքնված) քննությունը: Եվ քանի որ մարդու ընկալման գործընթացում ներառված է նրա հասկացության համակարգը, որն էլ ամբողջովին փոխաբերական է, ապա անհրաժեշտություն է ծագում տեքստի իմաստաբանական ուսումնասիրություններում ներառել նաև փոխաբերությունների հետազոտությունը՝ որպես անխուսափելի փուլ: Տեքստում ցանկացած (լայն կիրառություն ունեցող, թե դիպվածային) փոխաբերության կիրառությունն ի հայտ է բերում ոչ միայն հեղինակին բնորոշ հասկացության համակարգի առանձնահատկությունները, այլև նրա մտածողության մեջ առկա գուգորդումները և երևակայական ներաշխարհը³: Գրական ստեղծագործության իմաստի վերլուծության հիմնախնդրում կենսական կարևորություն ունի հեղինակի մտադրության հասկացումը⁴, ինչն էլ կարող է լավագույնս իրականացվել գրական տեքստի վերլուծության հերմենևտիկական մեթոդի կիրառմամբ: Փոխաբերության հետազոտության կարևորությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ այն ունի բառի՝ համատեքստով պայամանավորված նոր իմաստի «վերաստեղծման» հատկություն, ինչն էլ տեքստում իրականանում է յակոբսոնյան բանաստեղծական գործառույթի իրացմամբ:

Փոխաբերությունը որպես գիտության տարբեր ճյուղերում ուսումնասիրվող երևույթ, մեծ նշանակություն ունի նաև գրական թարգմանությունների վերլուծությունում: Ինչպես թարգմանության, այնպես էլ փոխաբերության իմաստի մեկնումը կախված է առաջնային իմաստ կրող միավորներից: Թարգմանությունը բնագրից բխող այլ լեզվով ներկայացված ստեղծագործություն է, իսկ փոխաբերության իմաստն ընկալվում է տվյալ համատեքստում ներկայացված անուղղակի իմաստ կրող և հատուկ գեղագիտական արժեք ունեցող միավորի միջոցով: Վերջինիս գործադրման

² Lakoff, G. (1987). *Women, Fire and Dangerous Things. What Categories Reveal about Mind*, The University of Chicago Press, Chicago and London.

³ Mandelblit, N. (1995). The cognitive view of metaphor and its implications in translation theory, *Translation and Meaning*, Part 3, Maastricht University Press, the Netherlands.

⁴ Tepe, P. (2011). Cognitive hermeneutics: The better alternative, *Discourse Studies*, 13(5), Sage publications, London, UK.

արդյունքում նրա բառացի իմաստը փոխարինվում է մեկ այլ իմաստով, որի կայացման համար ընթերցողի ընկալումը կարևոր գործոն է: Այս կապակցությամբ մշակված է մի մոտեցում, ըստ որի՝ փոխաբերության հասկացման գործընթացում ընթերցողի խնդիրն է դառնում դրա ստեղծման ճանապարհի «որոնումը», այլ կերպ՝ վերհանումը: Գեղարվեստական երկի՝ որպես գեղագիտական ամբողջության ընդհանուր թարգմանությունն իրականացնելու խնդրում փոխաբերությունների ճշգրիտ թարգմանությունը կարևոր գործոն է, քանի որ դրանք մարմնավորում են ոչ միայն տվյալ լեզվին բնորոշ պատկերավորությունը, այլև մշակույթին և անհատ հեղինակին հատուկ ստեղծագործ մտածողության մանրապատկերը⁵: Փոխաբերությունները, հաղետ գալով որպես մարդու պատկերավոր մտածողության դրսևորում, առանձնակի կարևորություն ունեն գեղարվեստական տեքստի գեղագիտական արժեքի ձևավորման, հեղինակի մտածելակերպի և անհատական գրելաոճի արտացոլման հարցում:

Սույն աշխատանքի **հիմնական նպատակն** է աղբյուր-տեքստի փոխաբերության էության և ստեղծման մեխանիզմների հետազոտման ճանապարհով թիրախ-տեքստում համարժեք փոխաբերության հայտնաբերման համապատասխան մեթոդաբանական սկզբունքների սահմանումը:

Սույն նպատակն իրականացնելու համար աշխատանքում առաջ ենք քաշել հետևյալ **խնդիրները**

- ուսումնասիրել փոխաբերության էության լեզվաբանական, հոգեբանական և ճանաչողական հիմքերը՝ փոխաբերության համապարփակ հետազոտության գիտական շրջանակը հստակեցնելու նպատակով,

- համեմատական վերլուծության ենթարկել գրական երկում փոխաբերության հայտնաբերմանն ու ստեղծմանն ուղղված մտածական գործընթացների արդի քննական մոտեցումները,

- հետազոտել փոխաբերության ստեղծման կամ ընտրության հիմնական ճանաչողական բաղադրիչները՝ հեղինակին հատուկ մտածելակերպն ընկալելու նպատակով,

- գնահատել ինչպես գրական տեքստի ընդհանուր, այնպես էլ փոխաբերության հերմենևտիկական և իմաստաբանական վերլուծության կարևորությունը թարգմանական գործընթացում,

- բացահայտել հեղինակի՝ փոխաբերության ստեղծման կամ կիրառման նպատակով գործադրած ճանաչողական մեխանիզմները,

- սահմանել թարգմանչի անհատական և մասնագիտական առանձնահատկությունների համապատասխանությունը բարեհաջող թարգմանության կայացման համար,

- թիրախ-տեքստում փոխաբերության համարժեքի հայտնաբերման նպատակով ձևակերպել քայլերի հաջորդականության ռազմավարություն:

⁵ Gasparyan, S. (2021). Translation as interpretation. *Cultural and Religious Studies*, 9 (1), USA.

Սույն ատենախոսության թեման **արդիական է**, և այդ արդիականությունը, նախևառաջ, պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև փոխաբերության երևույթի լուսաբանման խնդիրը մշտապես, դեռ դարեր ի վեր եղել է տարբեր գիտնականների հետաքրքրության առարկան, ուսումնասիրվել ոչ միայն լեզվաբանության, այլև բազմաթիվ այլ գիտությունների տեսանկյունից, այդուհանդերձ խնդիրը մինչև օրս էլ չի կորցրել իր արդիականությունը՝ շնորհիվ իր բազմաբարդ էության: Այն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև թարգմանաբանության դաշտում, մասնավորապես՝ բնագրի անթարգմանելի համարվող լեզվական միավորների՝ թիրախ լեզվում հնարավորինս ճշգրիտ համարժեքների որոշարկմանն ուղղված մեթոդաբանության մշակման տեսանկյունից:

Աշխատանքի **գիտական նորույթը** թարգմանաբանության դաշտում փոխաբերությանը վերաբերող մոտեցումների ու տեսությունների վերաիմաստավորումն է և դրա արդյունքում փոխաբերության միջգիտակարգային տեսությունների հիմնախնդիրների լուծմանն ուղղված նոր մոտեցում սահմանելը: **Նոր են** նաև փոխաբերությունների թարգմանության հիմնահարցում դրանց ճանաչողական բնույթի համապարփակ ուսումնասիրությունը և հերմենևտիկական-տեքստաբանական ու ճանաչողական լեզվառճաբանական վերլուծության մեթոդների միջոցով դրանց համատեքստային իմաստի քննությունն ու ճանաչողական թարգմանության սկզբունքների կիրառման համալիր ինտեգրացված մեթոդաբանության ձևավորումը: Այս մոտեցումը նորովի է մեկնաբանում գեղարվեստական տեքստի թե՛ ընդհանուր իմաստի և թե՛ փոխաբերությունների՝ որպես տեքստի լիակատար թարգմանությանը նպաստող լեզվական տարրերի թարգմանության խնդիրը: Մշակված ինտեգրացված մեթոդի միջոցով հնարավոր է ուսումնասիրել թարգմանված տեքստերում փոխաբերությունների ուղղակի, անուղղակի և ստեղծագործական փոխանցման եղանակների հարաբերակցությունը, ինչպես նաև կիրառել այն՝ թարգմանիչների անհատական ոճի վերլուծության և թարգմանության ամբողջականության գնահատման նպատակներով: Այս մոտեցումը հատկապես կարևոր է, քանի որ թույլ է տալիս բացահայտել, թե ինչպես թարգմանիչների ստեղծագործական ընտրությունները ազդում են գործի պուժեստային և բովանդակային կառուցվածքների հաղորդման վրա:

Ատենախոսության **մեթոդաբանական հիմքը** ներկայացվում է լեզվաբանական, ինչպես նաև միջգիտակարգային տարբեր տեսությունների հեղինակների, ինչպես օրինակ Օ. Լագուտայի (2003), Ջ. Լակոֆի (1989), Մ. Ջոնսոնի (1989), Ժ. Ֆոկոնյեի (2002), Մ. Թըրնըրի (2002), Է. Սեմինոյի (2017), Ու. Էկոյի (1992), Մ. Գասպարյանի (2021), Ռ. Բարթի (1977), Օ. Ռեմիսի (2011), Մ. Բլեքի (1955), Ջ. Ստինի (1944), Ն. Մանդելբլիթի (1995), Պ. Թեպեի (2011), Պ. Ստոքվելի (2007) և այլոց աշխատություններով, որոնք քննական վերլուծության են ենթարկվում ատենախոսության տարբեր բաժիններում:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, ինչպես նաև ներկայացված խնդիրների լուծման անաչառությունն ապահովելու նպատակով կիրառել ենք տվյալների հետազոտման և վերլուծության տարաբնույթ մեթոդներ՝ հետազոտության ընթացքում առաջնորդվելով բազմաթիվ տեսական մոտեցումների քննական վերլուծության և համադրման սկզբունքով: Քննության նյութ են ծառայել Ջեյ Լոնդոնի «Մարտին Իդեն», «Ջսպաշապիկ. միջաստղային թափառականը» և «Սպիտակ ժանիք» վեպերից քաղված ընդհանուր հաշվով 450 փոխաբերական միավորներ և դրանց հայերեն թարգմանական համարժեքները, որոնց զուգադիր քննությունն իրականացվել է առենախոսի կողմից մշակված մոտեցմամբ՝ փոխաբերության ստեղծման ու հասկացման դաշտում տարբեր տեսաբանների առաջ քաշած դրույթների համադրման եղանակով:

Տեսությունների և մոտեցումների քննական ուսումնասիրության ու լուսաբանման նպատակով կիրառվել են նկարագրական և համեմատական վերլուծության մեթոդները, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ համապարփակ պատկերացում կազմել փոխաբերության վերաբերյալ մինչ այժմ մշակված հիմնական մոտեցումների մասին և դուրս քաղել դրանցից այն դրույթներն ու սկզբունքները, որոնց համադրումը հուսալիորեն նպաստեց մեր աշխատանքում մշակված ինտեգրացված մոտեցման ձևավորմանը:

Ջեյ Լոնդոնի վերը նշված ստեղծագործություններից փոխաբերությունները դուրս են բերվել իմաստաբանական-ոճաբանական վերլուծության ճանապարհով, ապա տեքստի հերմենևտիկական քննությամբ գնահատվել է դրանց իմաստային ու գեղագիտական արժեքն ու նշանակությունը և ապա զուգադրման մեթոդի կիրառմամբ համեմատվել են աղբյուր- և թիրախ-տեքստերի փոխաբերական իմաստ կրող բոլոր միավորները, որը հնարավորություն է տվել բացահայտելու և քննության առնելու ինչպես բնագրի հեղինակի, այնպես էլ թարգմանչի անհատական պատկերավոր մտածելակերպի յուրահատկությունները:

Առենախոսության **տեսական նշանակությունը** արտացոլված է դրա իսկ հիմքում ընկած փոխաբերության բազմակողմանի հետազոտության մեջ, որը ենթադրում է լեզվաբանական, ճանաչողական և տեքստաբանական արդի հիմնահարցերից բխող միջգիտակարգային մոտեցում: Փոխաբերությունների ստեղծման քննությանն ու թարգմանությանն ուղղված ինտեգրացված մեթոդը հետազոտման նոր միջոց է, որի շնորհիվ հնարավոր լուծման եղանակներ են առաջարկվում թարգմանաբանական մի շարք արդի հիմնախնդիրներում, ինչպիսիք են՝ փոխաբերության հասկացության լեռային նշանակությունը գեղարվեստական տեքստում, ճանաչողական մոդելների միջլեզվական փոխադրումը, փոխաբերության թարգմանության ճշգրտության և համատեքստին համապատասխանությունը, լայն կիրառություն ունեցող և հեղինակային, ինչպես նաև դարձվածային և պատկերավոր փոխաբերությունների թարգմանությունը:

Ատենախոսության **կիրառական արժեքը** պայմանավորվորված է հետազոտության արդյունքում մշակված փոխաբերության ստեղծման և թարգմանության ինտեգրացված մեթոդի հնարավոր գործադրմամբ թարգմանաբանական և գրական ուսումնասիրություններ կատարելու ինչպես հետագա ատենախոսական հետազոտություններում, այնպես էլ մագիստրոսական թեզերում և ավարտական աշխատանքներում: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել գեղարվեստական ստեղծագործությունների բանասիրական համապարփակ վերլուծության դաշտում, ինչպես նաև գործնական թարգմանության ոլորտում: Փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդի առաջարկվող սկզբունքը կարող է ներդրվել նաև բազում թարգմանական ծրագրային ապահովման համակարգերում, արհեստական բանականությամբ գործող համակարգերում՝ տարալեզու թարգմանությունների ճշգրտությունն առավել կատարելագործելու միտումով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Առաջին գլուխը «Փոխաբերությունների առաջացման ճանաչողական-իմաստաբանական հիմքերը խոսքում» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին «Փոխաբերության էությունը և դրա վերհանման գործընթացի կողմնորոշիչ մեթոդները» ենթագլխում ներկայացված են փոխաբերության որպես լեզվաբանական երևույթի սահմանումը և դրա զարգացումը որպես միջգիտակարգային ուսումնասիրության առարկա: Այստեղ քննարկվում են փոխաբերության հայտնաբերման մեթոդաբանությունը և դրանց ճանաչողական բնութագրի կարևորությունը ընկալման և հասկացման գործընթացներում: Քննության է առնվում նաև գեղարվեստական տեքստերում փոխաբերության կիրառության նշանակության հիմնահարցը: Երկրորդ՝ «Փոխաբերության ստեղծման ճանաչողական մեխանիզմները» ենթագլխում քննության առարկան մարդու մտածական բարդ գործընթացների իրականացմանը նպաստող փոխաբերությունների նշանակության խնդիրն է: Դիտարկվում է նաև անհատի հատուկ լեզուն ու մտածելակերպը բնորոշելու փոխաբերության ներուժի հարցը: Երրորդ ենթագլխում՝ «Փոխաբերության գործաբանական նշանակությունը իրականության ընկալման մեջ», ուսումնասիրվում է հասկացության ինտեգրացիայի որպես փոխաբերության էության բացահայտմանն ուղղված համապարփակ մոտեցման հիմնավորվածությունը և դրա միջոցով փոխաբերության կառուցվածքի և ստույգ ընկալման խնդրի լուծման հնարավորությունները:

Երկրորդ գլուխը «Գրական դիսկուրսի հասկացության-փոխաբերական բաղադրիչը և թարգմանության տեսության մեջ կիրառելու դրա նպատակահարմարությունը» վերտառությամբ բաղկացած է երկու ենթագլխից: Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Գեղարվեստական տեքստի

հերմենևնտիկական և ճանաչողական-լեզվառճաբանական մեկնաբանության դերը թարգմանական գործընթացում», քննության են առնվում գրական տեքստի հերմենևնտիկական, ճանաչողական և լեզվառճաբանական հետազոտության կարևորության խնդիրները գրական երկերի թարգմանության հիմնահարցում, որը ներառում է թիրախ-տեքստում հեղինակային մտադրության փոխանցման ճշգրտության և աղբյուր-տեքստի ոճաբանորեն նշույթավորված լեզվական միավորների, մասնավորապես փոխաբերությունների թարգմանության հարցերը: Երկրորդ ենթագլխում՝ «Գեղարվեստական փոխաբերությունը թարգմանության ինտեգրատիվ մեթոդաբանության լույսի ներքո», ուսումնասիրվում են փոխաբերության հասկացության համակարգը և դրա դերը գրական տեքստին հուզական, պատկերավոր և գեղագիտական երանգավորում հաղորդելու գործում: Այստեղ քննության են առնվում փոխաբերության թարգմանության խնդիրները լուսաբանող տարբեր տեսություններ, որի արդյունքում ներկայացվում է փոխաբերության թարգմանության մեր կողմից մշակված ինտեգրացված մեթոդը և հիմնավորվում է դրա կիրառման նպատակահարմարությունը ճանաչողական և հասկացության փոխաբերությունները աղբյուր-լեզվից թիրախ-լեզու փոխադրելիս: Նշված մեթոդի հիմնադրույթները արտացոլված են հետևյալ քայլերում, որոնց հաջորդական իրականացումը հանդես է գալիս որպես թարգմանական ռազմավարություն.

1. *Աղբյուր-տեքստի փոխաբերությունների իմաստի թիրախավորում և հստակ ըմբռնում:*

2. *Քննարկվող փոխաբերությունների հասկացության փոխազդեցական/ինտեգրացիոն մեխանիզմների ուսումնասիրություն (աղբյուր- և թիրախ-լեզուների հասկացության տիրույթների հետազոտմամբ):*

3. *Փոխաբերության համարժեքների հայտնաբերում թիրախ-լեզվում՝ աղբյուր- և թիրախ-լեզուների գործառության և գեղագիտական համարժեքության սկզբունքի պահպանմամբ:*

4. *Հայտնաբերված փոխաբերությունների եզրագծում և շտկում՝ ձգտելով հնարավորինս պահպանել բնագրի գեղագիտական ազդեցությունը:*

Ատենախոսության երրորդ գլխում՝ **«Փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդի կիրառումը Ջեք Լոդոնի երկերի հայերեն թարգմանություններում»**, որը ներառում է երեք ենթագլուխ, քննության են առնվում փոխաբերության հնարավոր ճշգրիտ թարգմանության, դիպվածային և լայնորեն կիրառվող փոխաբերությունների ստեղծման ճանաչողական հնարավոր եղանակների, փոխաբերությունների թարգմանական համարժեքների և հեղինակի մտադրության համապատասխանության և հարակից այլ խնդիրներ Ջեկ Լոնդոնի ստեղծագործությունների հիման վրա:

Եզրակացության մեջ ի մի են բերվում հետազոտությամբ ձեռք բերված արդյունքները:

Գրականության ցանկում ներկայացված են աշխատանքի տեսական հիմքում ներգրավված տեսությունները, մոտեցումներն ու սկզբունքներն արտացոլող թվով 104 մենագրություններ, հոդվածներ, թեզեր և այլ գիտական աշխատություններ:

Այժմ անդրադառնալով փոխաբերությունների և դրանց համատեքստն արտացոլող տեքստային հատվածների քննարկմանը, ներկայացնում ենք հետևյալ օրինակը՝

*He felt lost, alone there in the room with that pale spirit of a woman. There was no bar-keeper upon whom to call for drinks, no small boy to send around the corner for a can of beer and by means of that **social fluid** start the amenities of friendship flowing (London, 1916:6).*

*Սենյակում մենակ մնալով կանացի կերպարանքով այդ դժգույն ոգու հետ՝ նա բոլորովին կորցրեց իրեն: Այստեղ չկար ո՛չ վաճառասեղան, ուր կարելի լիներ գինի պահանջել, ո՛չ էլ պատանյակ, որին կարելի էր ուղարկել զարեջրի, որպեսզի **մարդամոտություն ստեղծող այդ խմիչքների** օգնությամբ բարեկամական գրույց կարողանար լինել (Լոնդոն, 2018:11):*

Տվյալ պարագայում անգլերեն «social fluid» (բառացի՝ «հասարակական հեղուկ») բառակապակցությունը կիրառված է փոխաբերական իմաստով: Եթե տվյալ բառակապակցությունը դիտարկելու լինենք տեքստի քննության ճանաչողական-լեզվաոճաբանական դիրքերից, պարզ կդառնա, որ այն հանդես է գալիս որպես տվյալ տեքստային հատվածի կենտրոնական նպատակի (մտերմություն ստեղծել) իրականացմանը նպաստող միջոց՝ այլաբերական ներկայացմամբ: Այս՝ տեքստի կենտրոնացման տարանջատմանը (ըստ Պ. Ստոքվելի մոտեցման) նպաստող գործողությունը սույն աշխատության մեջ առաջադրված թարգմանության ինտեգրատիվ մեթոդաբանության առաջին քայլի մի մասն է, որը համալրվում է փոխաբերական իմաստ կրող բառակապակցության հայտնաբերումով: Եթե նշված բառակապակցությունը դիտարկենք համատեքստից դուրս, ապա դրա բաղադրիչների («social» - հասարակական և «fluid» - հեղուկ) անհամատեղելիությունն ակնհայտ է: Այսուհանդերձ՝ այդ անհամատեղելիությամբ է, որ տվյալ բառակապակցությունը դիտարկվող համատեքստում ձեռք է բերում փոխաբերական իմաստ: Քննարկվող փոխաբերության հասկացությային բնույթի ուսումնասիրությունը և համատեքստում արտահայտած իմաստի եզրագծումը՝ ֆրեյմի առանձնացումը թարգմանության ինտեգրատիվ մեթոդի հաջորդ քայլն է: Տվյալ համատեքստում քննվում է «հասարակական» և «հեղուկ» բառերի հասկացությային տիրույթների կապը: Պարզվում է, որ «հեղուկ» հասկացույթն իր մեջ ներառում է նաև «ըմպելիք», «խմիչք» հասկացույթները, որոնք էլ «հասարակություն» հասկացույթի հետ առավել համակցվող տարբերակներ են: Այսուհանդերձ՝ համատեքստում հղում է կատարվում, ինչպես արդեն նշվել է մտերմության առաջացման նպատակին, այդ իսկ պատճառով «ըմպելիք» հասկացույթը նպատակահարմար չէ: Վերջինս կիրառելի չէ նաև այն պատճառով, որ տեքստում նշած է «զարեջուր» բառը, որն իր տեսակով ոգելից խմիչք է: Բառակապակցության հայերեն տարբերակը առավել մեկնողաբար է հնչում,

սակայն այն նույնպես պարունակում է փոխաբերական իմաստ, քանզի «խամիչք» գոյականը, որն իր իմաստով անշունչ առարկա է մատնանշում, չի կարող ուղիղ «ստեղծել» իմաստով կիրառվել, քանի որ այդ բայն իր տեսակով ներգոյական է, այսինքն՝ պահանջում է գործողություն «կատարողի»: Այս պարագայում, անդրառնալով թարգմանության ինտեգրացված մեթոդի երրորդ քայլին և իրականացնելով տեքստի հերմենևտիկական քննություն՝ պարզում ենք, որ թարգմանչի հասկացության համակարգում ակտիվացել են «social - հասարակական» և «հասարակական-մարդամոտություն» զուգորդումները, որոնց միակցված տիրույթում (ըստ Մ. Ֆոկոնյեյի և Մ. Թըրնըրի) ներկայացված են «հասարակական-հասարակություն-մարդիկ-մարդ» հասկացությունները: Այս դեպքում կիրառված է հասկացության խառնուրդի մեխանիզմը, որի արդյունքում դուրսբերված միակցված տիրույթի հասկացությունների հատկանիշների համադրության հետևանքով գտվել է համատեքստին համապատասխանող «մարդ» հասկացությու: Ինտեգրացված մեթոդի չորրորդ քայլում բնութագրված մոտեցման համաձայն՝ թարգմանիչը հստակեցնում է իր փոխաբերությունների ընտրությունը՝ ձգտելով պահպանել աղբյուր-տեքստի հեղինակային և գեղագիտական նպատակադրումը՝ ստեղծագործականություն ցուցաբերելով և զարգացնելով վերոհիշյալ հասկացությու «մարդամոտություն» տարբերակով:

Հետաքրքրության է արժանի նաև հետևյալ օրինակը.

*You were then not fixed, not **crystallized**. You **were plastic, a soul in flux, a consciousness and an identity in the process of forming**—ay, of forming and forgetting (London, 1913:1).*

*Այդ շրջանում դեռ չէր կազմավորվել, չէր բյուրեղացել քո անհատականությունը: Դու **կակուղ էիր մեղրամուսի նման, դեռ չէիր ստացել հաստատուն ձև, քո գիտակցությունը դեռևս գտնվում էր ձևավորման ընթացքում...** (Լոնդոն, 1965: 7)*

Իրականացնելով տեքստի լեզվաճանաչողական հետազոտություն՝ բացահայտում ենք, որ տեքստի կենտրոնական նպատակադրումը՝ կենտրոնացումը (ըստ Պ. Ստոքվելի) «անձի ձևավորման մեջ» է, որն էլ արտահայտված է «consciousness» («գիտակցություն» ըստ՝ Ամանգուլյան, Հովհաննիսյան, 1984, էջ 186) և «identity» («անհատականություն» - նույն տեղում, էջ 464) բառերով: Անգլերեն տարբերակում ներկայացված «crystallized» (հայերեն «բյուրեղացված» - նույն տեղում, էջ 215), «plastic» (հայերեն «պլաստիկ» - նույն տեղում, էջ 704), «soul in flux» (բառացի՝ «հոգին հալանյութի մեջ» - նույն տեղում, էջ 900; 358) բառերն ու բառակապակցությունը կրում են փոխաբերական իմաստ, քանի որ դրանց իմաստը ուղղակի կերպով չի ընկալվում: Իրականացնելով տվյալ փոխաբերությունների համատեքստային իմաստի ֆրեյմինգ թարգմանիչը դուրսբերված իմաստի շրջանակներում կենտրոնանում է դիտարկվող հասկացությունների քննությանը և, ինչպես բնութագրված է թարգմանության ինտեգրատիվ մեթոդում, փորձ է անում հասկացության տիրույթների միակցման միջոցով հայտնաբերել ներկայացված փոխաբերությունների միջև առկա

հասկացության ընդհանրությունները: Եվ այսպես՝ «crystallized» փոխաբերությունը ուղղակի է թարգմանվել հայերեն, քանի որ այն չի հակասում հայերեն տեքստի շարությանը և իմաստաբանական կառուցվածքին: Այսուհանդերձ՝ «plastic» հասկացությամբ թարգմանելի մտքում գուցեղավել է «կակուղ էիր մեղրամումի նման» բառակապակցության մեջ առկա «մեղրամում» հասկացության հետ: Տվյալ պարագայում թարգմանիչը, ձգտելով չխախտել հայերեն տեքստի իմաստաբանական և ոճաբանական համակարգվածությունը, դիմել է «մեղրամումի նման կակուղ» ճանաչողական կարծրատիպի կիրառմանը: Ուշագրավ է նաև «soul in flux» փոխաբերական իմաստ կրող բառակապակցությունը, որը թարգմանվել է մեկնողաբար՝ «դեռ չէիր ստացել հաստատուն ձև» բառակապակցությամբ: Այսպիսով՝ թարգմանիչը, մի կողմից ուղղակիորեն, մյուս կողմից անուղղակիորեն թարգմանելով նշված փոխաբերությունները, հայերեն տարբերակում հաջողում է պահպանել աղբյուր-տեքստի հիմնական իմաստային և ոճական կառուցվածքը՝ չաղավաղելով նաև հեղինակային մտադրությունը:

Ներքոբերյալ օրինակը նույնպես արժանի է ուշադրության.

*On every side was the silence, pressing upon them with a tangible presence. It affected their minds as the many atmospheres of deep water affect the body of the diver. **It crushed them with the weight of unending vastness and unalterable decree.** It crushed them into the remotest recesses of their own minds, pressing out of them, like juices from the grape, all the false ardours and exaltations and undue self-values of the human soul, until they perceived themselves finite and small, specks and motes, moving with weak cunning and little wisdom **amidst the play and inter-play of the great blind elements and forces** (London, 1906:6).*

Դա ճնշում էր բանականության վրա, ինչպես ջուրն է մեծ խորություններում ճնշում սուզակի մարմնին: **Դա ընկճում էր իր օրենքի անասնանությանը ու անխախտելիությանը:** Դա հասնում էր նրանց գիտակցության ամենանվիրական գաղտնարաններին՝ քամելով այնտեղից, ինչպես հյութը խաղողից, այն ամենը, ինչ շինծու է ու կեղծ, իրեն չափից ավելի բարձր զնահատելու ամեն մի հակում, որ հատուկ է մարդկային հոգուն, և ներշնչում նրանց այն միտքը, թե իրենք ոչ այլ ինչ են, եթե ոչ չնչին, մահկանացու էակներ, փոշեհատիկներ, մժեղներ, որոնք բաց են անում իրենց ճանապարհը բախտի բերումով՝ առանց նկատելու **բնության կույր ուժերի խաղը** (Լոնդոն, 2017:7):

Այս հատվածում «it [silence] crushed them with the weight of unending vastness and unalterable decree» նախադասության մեջ առկա են «crushed», «weight of unending vastness» և «unalterable decree» փոխաբերությունները, որոնք բնութագրում են լռությունը որպես «ճնշող» և «հզոր» երևույթ: Հայերեն տարբերակում տեսնում ենք, որ «crushed» (բառացի՝ «զարկել» - Ասմանգուլյան, Հովհաննիսյան, 1984:214) բառը անուղղակի կերպով թարգմանված է «ընկճում էր», որը համահունչ է հայերեն տեքստի իմաստային ու ոճական առանձնահատկությունների հետ: «Weight of unending vastness» (բառացի՝ «անվերջ ընդարձակության կշռով» ըստ՝ Ասմանգուլյան, Հովհաննիսյան, 1984, էջ 1082; 1042; 1058) և «unalterable decree» (բառացի՝ «անխախտելի

վճիռ» - նույն տեղում, էջ 44; 232) փոխաբերությունների բառացի իմաստը որոշակիորեն պահպանված է հայերեն տարբերակում («օրենքի անսահմանությամբ և անխախտելիությամբ»): Այս պարագայում թարգմանչի և հեղինակի հասկացության ին համակարգերի փոխաբերական գուգորդումները մասամբ համընկնում են: Տվյալ օրինակում հատկանշական է նաև «play and inter-play of the great blind elements and forces» (բառացի «մեծ կույր ուժերի խաղը») փոխաբերությունը, որը հայերենում թարգմանվել է մասամբ ուղղակիորեն «բնության կույր ուժերի խաղը», որում «forces» բաղադրիչը թարգմանվել է մեկնողաբար «բնության ուժեր», ինչն էլ վկայում է, որ թարգմանինչն իրականացրել է տեքստի հերմենևտիկական դիտարկում:

Աշխատանքում պարզաբանել ենք, որ փոխաբերությունների բարեհաջող թարգմանության շնորհիվ լիարժեքորեն թիրախ-տեքստ են փոխանցվում գեղարվեստական տեքստին հատուկ և իմաստային ու ոճական արտահայտվածություն ունեցող լեզվամշակութային տարրերը, հեղինակի պատկերավոր մտածելակերպն արտացոլող ճանաչողական մոդելներն ու աշխարհընկալման առանձնահատկությունները:

Այս ամենից ելնելով փորձ է արվել հետազոտել փոխաբերության թարգմանության վերաբերյալ մի շարք տեսություններ, որոնց արդյունքում սահմանվել է, որ փոխաբերության թարգմանության իրականացման համար բավարար չէ հետազոտել միայն դրա լեզվական և իմաստաբանական հայեցակերպերը: Անհրաժեշտ է ներգրավել նաև փոխաբերության հասկացության կերտվածքի ուսումնասիրությունը, ինչը նպաստում է ոչ միայն փոխաբերության ընկալմանը, այլև հեղինակի վերաբերմունքի վերլուծմանը, որն անուղղակիորեն փոխանցված է դիտարկվող փոխաբերության ընտրության կամ ստեղծման ներքո: Չափազանց կարևոր է նաև իրականացնել ստեղծագործության ընդհանուր իմաստի հերմենևտիկական-տեքստաբանական մեկնաբանում, որը նպաստում է տվյալ ոճական հնարի վերջնական ընկալմանը և ուղղորդում է թարգմանչին հայտնաբերելու դրա ճշգրիտ համարժեքը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ սույն ատենախոսության մեջ առաջադրել ենք փոխաբերությունների թարգմանության ինտեգրացված մեթոդը, որում համալիր կերպով ներգրավված են փոխաբերությունների հայտնաբերման մոտեցումները, դրանց հասկացության ինտեգրացված ուղղված ուսումնասիրությանն ուղղված տեսությունները, համատեքստային իմաստի հստակեցման մեթոդները, իմաստաբանական, լեզվաոճաբանական, ճանաչողական-լեզվաոճաբանական, ինչպես նաև տեքստաբանական-հերմենևտիկական վերլուծության սկզբունքները: Վերոնշյալ մեթոդը տեսական նորամուծություն է, որը միտված է համակարգելու փոխաբերությունների տարալեզու թարգմանությանն ուղղված գործընթացները, ինչպես նաև ծառայելու որպես բնագրի և թարգմանության ճշգրտության և համահնչության գնահատման միջոց:

Սույն աշխատանքում կիրառված են վերլուծության որակական մեթոդներ, որոնց շարքում են փոխաբերությունների իմաստաբանական և ճանաչողական-լեզվառճաբանական վերլուծությունը, աղբյուր- և թիրախ-փոխաբերությունների հասկացության լեզվաբանական տիրույթների հետազոտումը հասկացության ինտեգրացիայի մեթոդի հիման վրա, տեքստաբանական-հերմենևտիկական վերլուծությունը՝ ուղղված ինչպես ողջ ստեղծագործության ընդհանուր իմաստի, այնպես էլ առանձին հատվածներում հանդիպող փոխաբերությունների տեղային իմաստների վերհանմանը: Ուսումնասիրության արդյունքները ամփոփված են հետևյալ դրույթներում՝

- Փոխաբերության հետազոտությունը համարվում է լիակատար այն պարագայում, երբ հնարավոր է սահմանել ոչ միայն դրա իմաստային-լեզվառճաբանական առանձնահատկությունները, այլև մեկնաբանել դրա հասկացության կառուցվածքը, որն արտացոլում է հեղինակին բնորոշ անհատական մտածական գույրերը:
- Աղբյուր-տեքստում փոխաբերության առանձնացման հարցում արդարացված է փոխաբերությունների հայտնաբերման գործընթացի (ՓՀԳ) մեթոդի կիրառությունը, որի քայլ-առ-քայլ ռազմավարության շնորհիվ տեքստում հնարավոր է վերհանել փոխաբերական իմաստ պարունակող միավորները: Աղբյուր-փոխաբերության իմաստի լիարժեք հասկացման նպատակով նշված գործընթացը հարկ է համարել համատեքստային իմաստի եզրագծմանն ուղղված ֆրեյմերի սահմանագատման մեթոդով, ինչպես նաև տեքստի՝ ճանաչողական-լեզվառճաբանական վերլուծության մաս կազմող ֆիգուրայի, հիմքի և կենտրոնացման առանձնացման մեթոդաբանությամբ:
- Հեղինակի կողմից փոխաբերության ստեղծման կամ ընտրության գործընթացը հնարավոր դարձավ ուսումնասիրել հասկացության փոխաբերության և հասկացության ինտեգրացիայի տեսությունների համալրմամբ, ինչը հիմք ծառայեց իրականացնելու հեղինակի մտածելակերպից և ճանաչողական այլ առանձնահատկություններից բխող անհատական գրելառճի հետազոտման համար:
- Փոխաբերության թարգմանությունը, իր էությանբ, ճանաչողական գործընթաց է, որի արդյունավետ իրականացումը պահանջում է հստակ, քայլ առ քայլ կառուցված ռազմավարություն: Այս նպատակով սույն աշխատությունում մշակված ինտեգրացված մեթոդը համադրում է մի քանի մոտեցումներ և հիմնված է փոխաբերության ընկալման և թարգմանության համար անհրաժեշտ իմաստաբանական-լեզվառճաբանական, ճանաչողական և հերմենևտիկական-տեքստաբանական վերլուծության սկզբունքների վրա, ինչը ապահովում է գործընթացի համակարգվածությունն ու արդյունավետությունը: Նշված մեթոդը հնարավորություն տվեց տարանջատելու փոխաբերությունների թարգմանության ուղիղ, անուղղակի և ստեղծագործաբար իրականացված

եղանակները, ինչը նպաստեց թարգմանիչների ստեղծագործական ընտրությունների պատճառաբանվածության բացահայտմանը, ինչպես նաև աղբյուր-տեքստի բովանդակային կառուցվածքի՝ թիրախ-տեքստ փոխանցման գործընթացում դրանց ազդեցության վերլուծությանը:

- Փոխաբերության թարգմանություն իրականացնելու համար թարգմանիչը պետք է օժտված լինի ոչ միայն համապատասխան մասնագիտական կարողություններով և հմտություններով, այլև կարողանա քարտեզել տվյալ փոխաբերության կառուցման ուղիները, այսինքն՝ հասկանալ, թե ինչ ճանաչողական մեխանիզմների և զուգորդումների միջոցով է հեղինակը ստեղծել կամ ընտրել տվյալ փոխաբերությունը՝ միաժամանակ հաշվի առնելով հեղինակի մտադրությունը և աղբյուր լեզվի մշակութային բնութագրերը: Փոխաբերությունների թարգմանության ինտեգրացված մեթոդի հիմքը հանդիսացող այս դրույթը տվյալ աշխատանքում կենտրոնական տեղ է զբաղեցնում և ի տարբերություն այլ թարգմանական մոտեցումների, համակողմանիորեն բնութագրում է թարգմանության գործընթացի դինամիկան՝ ներթափանցելով թարգմանվող միավորի հասկացութային համակարգ և զնահատելով դրա համապատասխանությունը ինչպես տվյալ համատեքստին, այնպես էլ երկի ամբողջական տեքստին:
- Ատենախոսության հիմնանպատակ հանդիսացող փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդը քառաքայլ գործընթաց է, որը ենթադրում է աղբյուր-տեքստում փոխաբերությունների հայտնաբերում, փոխաբերությունների հասկացութային կառուցվածքի հետազոտում, թիրախ-լեզվում համարժեքների հայտնաբերում՝ պահպանելով աղբյուր-տեքստից և դրա համատեքստային իմաստից բխող գեղագիտական և լեզվաոճական առանձնահատկությունները, ընտրված համարժեքների եզրագծում՝ աղբյուր-տեքստին հատուկ գեղագիտական ազդեցության պահպանմամբ:
- Աշխատանքում Ջեք Լոնդոնի երեք երկերի՝ «Մարտին Իդեն», «Չսպաշարված միջաստղային թափառականը» և «Սպիտակ ժանիք» վեպերի բնագիր տեքստերից դուրսբերված փոխաբերությունների և նշված վեպերի համապատասխան հայերեն թարգմանություններից առանձնացված համարժեքների համեմատական վերլուծության արդյունքում պարզվում է, որ սույն աշխատությունում մշակված՝ փոխաբերությունների թարգմանության ինտեգրացված մեթոդը արդեն իսկ որոշակիորեն արտացոլված է թարգմանիչների կողմից կիրառված մոտեցումներում:
- Աշխատանքում հետազոտված փոխաբերությունների՝ տեքստից բխող հերմենտիկական վերլուծության և հասկացութային համակարգում գործող զուգորդումների բացահայտման արդյունքում պարզվում է, որ «Մարտին Իդեն» և «Սպիտակ ժանիք» վեպերում փոխաբերությունների թարգմանության ուղիղ, անուղղակի և ստեղծագործաբար իրականացված եղանակների

հարաբերակցությունը համեմատաբար հավասարակշռված է («Մարտին Իդեն» վեպից՝ 16 ուղղակի, 18 անուղղակի եղանակներով և 22 ստեղծագործական մոտեցմամբ թարգմանված փոխաբերություններ և «Մպիտակ ժանիք» վեպից՝ 7 ուղղակի, 5 անուղղակի եղանակներով և 9 ստեղծագործական մոտեցմամբ թարգմանված փոխաբերություններ), մինչդեռ «Զսպաշապիկ. միջաստղային թափառականը» վեպում թարգմանված փոխաբերությունների մեծամասնությունը ներկայացված է անուղղակի եղանակով և ստեղծագործաբար (6 ուղղակի, 11 անուղղակի եղանակներով և 15 ստեղծագործական մոտեցմամբ թարգմանված փոխաբերություններ): Ստացված արդյունքները վկայում են, որ թարգմանական ռազմավարությունների ընտրությունը պայմանավորված է ոչ միայն տեքստային առանձնահատկություններով, այլև թարգմանչի անհատական մեկնաբանությամբ և ստեղծագործական մոտեցմամբ, ինչը որոշիչ ազդեցություն է ունենում փոխաբերությունների թարգմանության բնույթի վրա:

- Աշխատանքում ուսումնասիրված փոխաբերությունների և դրանց՝ թիրախ-լեզվով թարգմանված տարբերակների գույադրության արդյունքում պարզվում է, որ հենց փոխաբերությունների կիրառման միջոցով է հեղինակը փոխանցել գլխավոր հերոսի և իր իսկ պատկերավոր-գաղափարախոսական ներաշխարհների փոխկապակցվածությունը, ինչպես նաև անհատի՝ իրականության ընկալման առանձնահատկությունները: Ուսումնասիրված վեպերի թարգմանություններում արձանագրված փոխաբերությունների փոխանցման՝ ուղղակի, անուղղակի և ստեղծագործական եղանակների հարաբերակցությունը բացահայտում է թարգմանիչների անհատական ոճերը և հիմք է տալիս գնահատելու թարգմանության լիարժեքության աստիճանը:

Սույն ատենախոսության արդյունքներից ելնելով՝ մենք առաջարկում ենք թարգմանիչներին կիրառել փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդը, որի շնորհիվ հնարավոր է բնագիր տեքստում ներկայացված փոխաբերության և դրա գեղագիտական արժևորման հիմնապուն հանդիսացող հուզարտահայտչական նրբերանգները փոխանցել թիրախ-տեքստ: Կարծում ենք, որ վերոհիշյալ մեթոդը կարող է հետագայում հաջողությամբ կիրառվել ոչ միայն գրական, այլև այլ ժանրերի տեքստերի վերլուծության մեջ, ներդրվել փոխաբերությունների հասկացությային-տիպաբանական ուսումնասիրությունների, տեքստի կորպուսային հետազոտությունների, մեկնաբանության և տարալեզու թարգմանությունների իրականացման գործընթացներում:

Որպես մեր աշխատանքի եզրակացություն կարելի է սահմանել, որ փոխաբերությունները, խոսքի արտահայտչականության միջոց լինելուց զատ, նաև հեղինակային մտադրության մանրապատկերման հզոր ներուժ ունեն, որի շնորհիվ հեղինակը կարողանում է անուղղակիորեն փոխանցել իր վերաբերմունքն ու մոտեցումը երկում ներկայացվող բազում հոգեբանական և փիլիսոփայական բնույթ

կրող խնդիրների և գաղափարների նկատմամբ: Փոխաբերությունների ուսումնասիրությունն ու հաջող թարգմանությունը հիմնված են դրանց կիրառմանը կամ ստեղծմանն ուղղված ճանաչողական մեխանիզմների և հասկացության կառուցվածքի մանրակրկիտ ուսումնասիրության, դիտարկվող ստեղծագործության տեքստաբանական և հերմենևտիկական վերլուծության վրա: Թարգմանիչը՝ որպես փորձառու մասնագետ, պետք է հմտորեն կիրառի այս մեթոդները՝ հայտնաբերելու թիրախ-փոխաբերությունները և դրանք հարմարեցնելու թիրախ-լեզվի լեզվական ու ոճական առանձնահատկություններին, ինչը ապահովում է ոչ միայն բնագրի և թարգմանության համահնչությունը, այլև թարգմանված ստեղծագործության գեղարվեստական արժեքը:

Աշխատության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Սարգսյան, Ն. (2022). Փոխաբերության թարգմանությունը գրական երկում լեզվաճանաչողական դիտակյունից, *Science and Education: a New Dimension. Philology*, X(77), Issue: 264, Budapest, էջ 60-64:

2. Gasparyan, S. and Sargsyan N. (2023). Hermeneutic exegesis in text interpretation. *Сборник научных и учебно-методических трудов. Выпуск 20 в честь Юбилея профессора Светланы Григорьевны Тер-Минасовой*, КДУ Добросвет, Москва, стр. 76-86:

3. Sargsyan, N. (2023). The Essence of Metaphor and Its Interlingual Translation, *Armenian Folia Anglistika*, Vol. 19, Issue 1 (27), Yerevan State University Press, Yerevan, pp. 105-117:

4. Սարգսյան, Ն. (2024). Փոխաբերության ճանաչողական էությունը, *Foreign Languages in Higher Education*, Vol. 28, N2 (37), Yerevan State University Publishing house, Yerevan, էջ 97-117:

5. Սարգսյան, Ն. (2025). Փոխաբերության թարգմանության հիմնահարցը գեղարվեստական գրականության մեջ (անդրադարձ Չ. Լոնդոնի «Զսպաշապիկ» վեպին), *Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի*, No, 1, Եվրասիա միջազգային համալսարան, Երևան, էջ 146-158:

6. Gasparyan, S. and Sargsyan N. (2025). Writer's intention and reader's interpretation from an integrative-methodological standpoint. *Bulletin of Yerevan University B: Philology* Vol. 16, No. 3 (48), Yerevan State University Press, Yerevan, էջ 63-76:

НЕЛЛИ САРГСЯН

Когнитивный аспект создания и перевода метафоры: интегрированный подход

Резюме

Основная цель данной диссертации заключается в определении методологических принципов выявления метафор в тексте перевода путем исследования сущности и механизмов создания метафор текста-источника.

Для достижения данной цели в работе представлены следующие **задачи**:

- изучить лингвистические, психологические и когнитивные основы сущности метафор с целью уточнения научных рамок комплексного их исследования,
- путем сопоставительного анализа рассмотреть актуальные подходы к изучению ментальных процессов, направленных на выявление и создание метафор в тексте художественного произведения,
- исследовать основные когнитивные компоненты создания или выбора метафор для понимания мышления, свойственного автору,
- оценить важность герменевтического и семантического анализа как художественного текста в целом, так и метафор в процессе перевода,
- выявить когнитивные механизмы, задействованные автором в целях создания или применения метафор,
- установить соответствие индивидуальных и профессиональных характеристик переводчика условиям успешной реализации перевода,
- сформулировать стратегию последовательных шагов для выявления эквивалентов метафор в тексте перевода.

Актуальность настоящей диссертации определяется прежде всего тем, что, несмотря на то что проблема метафоры как явления на протяжении веков привлекала внимание различных ученых и изучалась не только в лингвистике, но и в других науках, она не утратила своей значимости благодаря своей многогранной природе. Проблема метафоры представляет особый интерес и в сфере переводоведения, в частности с точки зрения разработки метода, направленного на определение максимально точных эквивалентов для языковых единиц, считающихся непереводаемыми в исходном тексте.

Научная новизна работы состоит в переосмыслении теорий и подходов к проблеме метафоры в сфере переводоведения и, в качестве результата, определении нового подхода к решению основных задач междисциплинарных теорий метафоры. **Новизна** также заключается в комплексном исследовании когнитивной природы метафор в переводе, в изучении их контекстуального значения с использованием герменевтического-текстологического и когнитивно-стилистического анализа, а также

в разработке интегрированной методологии, основанной на применении принципов когнитивного перевода. Данный подход предлагает новую интерпретацию проблемы перевода, охватывая как общий смысл художественного текста, так и его метафор как языковых единиц, способствующих обеспечению полноценного перевода. Разработанный интегрированный метод перевода метафор позволяет исследовать соотношение способов прямой, опосредованной и творческой передачи метафор в переводных текстах, а также применять его для анализа индивидуального стиля переводчиков и оценки целостности перевода. Данный подход особенно важен, поскольку позволяет выявить, как творческие выборы переводчиков влияют на передачу сюжетной и содержательной структуры произведения.

С целью обеспечения достоверности и обоснованности результатов работы, а также объективности решения поставленных задач были применены разнообразные **методы исследования и анализа данных**. В ходе исследования мы руководствовались принципом аналитического изучения и сопоставления различных теоретических подходов. Материалом исследования послужили 450 метафорических единиц, извлечённых из романов Джека Лондона «Мартин Иден», «Межзвёздный скиталец», «Белый клык», а также их эквиваленты, извлеченные из текста армянского перевода. Сопоставительный анализ этих единиц был осуществлён с использованием разработанного автором диссертации подхода, основанного на сопоставлении положений различных теоретиков в области создания и понимания метафоры. Метафоры из вышеупомянутых произведений Джека Лондона были выделены посредством семантико-стилистического анализа, после чего их смысловое и эстетическое значение оценивалось с помощью герменевтического исследования текста. С использованием метода сопоставления сравнивались выявленные единицы метафорического значения исходного и целевого текстов, что позволило определить и проанализировать особенности индивидуального образного мышления как автора оригинала, так и переводчика.

Теоретическая значимость диссертации проявляется в многоплановом исследовании метафоры, которое предполагает междисциплинарный подход, вытекающий из современных лингвистических, когнитивных и текстологических проблем. Интегрированный метод изучения создания и перевода метафор является новым инструментом исследования, благодаря которому предлагаются возможные пути решения ряда актуальных переводоведческих задач, таких как: значение концептуальной сущности метафоры в художественном тексте, межъязыковая передача когнитивных моделей, точность и контекстуальная адекватность перевода метафор, а также перевод как общих, авторских, так и устойчивых и образных метафор.

Практическая значимость диссертации обусловлена возможностью применения интегрированного метода создания и перевода метафор, разработанного в ходе исследования, для проведения переводоведческих и литературоведческих

исследований как в последующих диссертационных работах, магистерских и дипломных работах. Результаты исследования могут использоваться как в сфере комплексного филологического анализа художественных произведений, так и в области практического перевода. Предлагаемый принцип интегрированного метода перевода метафор также может быть внедрён в различные переводческие программные системы и системы с искусственным интеллектом с целью повышения точности межъязыковых переводов.

NELLI SARGSYAN

The Cognitive Paradigm of Metaphor Creation and Translation: An Integrated Approach

Summary

The **main aim** of this study is to define appropriate methodological principles for identifying equivalent metaphors in the target text through an investigation of the nature and mechanisms of metaphor in the source text.

To achieve this aim, the study addresses the following **objectives**:

- To examine the linguistic, psychological, and cognitive foundations of metaphor in order to clarify the scientific framework for its comprehensive study.
- To conduct a comparative analysis of contemporary analytical approaches to the cognitive processes involved in identification and creation of metaphors in literary works.
- To investigate the main cognitive components involved in the creation or selection of metaphors in order to understand the author's unique mentality.
- To evaluate the importance of hermeneutic and semantic analysis of both the overall literary text and its metaphors within the translation process.
- To reveal the cognitive mechanisms employed by the author for the purpose of creating or applying metaphors.
- To evaluate the alignment of the translator's individual and professional characteristics with the effective realization of a translation.
- To formulate a strategy of sequential steps for the identification of metaphorical equivalents in the target text.

The topic of this dissertation is highly **relevant**, and its relevance is primarily due to the fact that, although the study of the phenomenon of metaphor has consistently attracted the interest of scholars over the centuries and has been examined not only from the perspective of linguistics but also from that of many other disciplines, the issue has not lost its significance to this day, owing to its complex and multifaceted nature. It is of particular interest in the field of translation studies, especially from the standpoint of the development of a

methodology aimed at determining the most accurate equivalents in the target language for the source-language units considered untranslatable.

The **scientific novelty** of this research consists in the reinterpretation of approaches and theories related to metaphor, resulting in the formulation of a new approach aimed at addressing the challenges of interdisciplinary theories of metaphor. Also **novel** is the comprehensive investigation of the cognitive essence of metaphors in translation, as well as the examination of their contextual meaning with the help of hermeneutic-textological and cognitive-stylistic analytical methods, combined with the development of an integrated methodology based on the principles of cognitive translation. This approach interprets the translation of both the overall meaning of a literary text and its metaphors as linguistic units contributing to a complete and accurate translation in a new way. The developed integrated method of metaphor translation makes it possible to examine the correlation between direct, indirect, and creative ways of rendering metaphors in translated texts, as well as to apply it to the analysis of translators' individual styles and the assessment of translation integrity. This approach is particularly important, as it allows for identifying how translators' creative choices influence the transmission of the plot and content structures of a work.

To ensure the reliability and validity of the results, as well as the objectivity in addressing the research questions, **a variety of data collection and analysis methods** were applied. During the study, we were guided by the principles of critical analysis and comparison of multiple theoretical approaches. The research material consisted of a total of 450 metaphorical units extracted from Jack London's novels "Martin Eden", "The Star Rover", and "White Fang", along with their Armenian translation equivalents. The comparative examination of these units was conducted using an approach developed by the author based on a juxtaposition of the positions put forward by various theorists in the field of metaphor creation and comprehension. Metaphors from the aforementioned works of Jack London were analyzed through a semantic-stylistic approach, after which their semantic and aesthetic significance was evaluated using hermeneutic analysis of text. Subsequently, using a comparative method, all metaphorical units in the source and target texts were examined and compared, facilitating the identification and analysis of the distinctive features of both the author's and the translator's individual imaginative thinking.

The theoretical significance of this dissertation is reflected in its comprehensive investigation of metaphor, which implies an interdisciplinary approach derived from contemporary linguistic, cognitive, and textological issues. The integrated method developed for examining the creation and translation of metaphors represents a new research instrument, through which possible solutions are proposed for a number of current challenges in translation studies, such as the role of the conceptual essence of metaphor in literary texts, the cross-linguistic transfer of cognitive models, the accuracy and contextual appropriateness of metaphor translation, and the translation of both conventional and authorial, as well as idiomatic and figurative metaphors.

The practical value of this dissertation lies in the potential application of the integrated method for the creation and translation of metaphors, developed in this research, in conducting translation and literary studies in future dissertations, master's and bachelor's degree theses and projects. The results of the study can be applied both in the comprehensive philological analysis of literary works and in practical translation activities. The proposed principles of the integrated method for metaphor translation can also be implemented in various translation software systems and artificial intelligence–based platforms to enhance the accuracy of multilingual translations.

A handwritten signature in black ink, appearing to read 'S. Zell', with a stylized flourish at the end.